42-ՐԴ ՆԻՍՏ

6 դեկտեմբերի 1918թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 8-ին՝ նախագահությամբ *Ա. Սահակյանի:*

Ա. Մալխասյան - Զեկուցում է օրենսդրական հանձնաժողովի կողմից Հայաստանում գործող ընդհանուր օրենքների վերաբերմամբ:

Կարծիքների փոխանակությունից հետո ընդունվում է օրենսգիծը հետևյալ ձևով. Հայաստանի Հանրապետության մեջ գործում են ռուսական օրենքներն այն լրացումներով ու հավելումներով, որ ընդունել են Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը, Անդրկովկասյան Սեյմն ու Կոմիսարիատը և Հայաստանի Խորհրդարանը:

Մինիստր-նախագահ - Հանդիսավոր ձևով հայտարարում է, որ այսօր, դեկտեմբերի 6-ին, ոչ մի տաճիկ զինվոր չի մնացել Հայաստանի տերիտորիայի վրա: Մեր զորքերը գրավել են արդեն բոլոր վայրերն առանց որևէ միջադեպի: Դահլիճը հայտարարությունը լսեց որոտընդոստ ծափահարությամբ:

Ա. Շահմազյան - Զեկուցում է զորական մինիստրին 25.406 ռ. վարկ բաց անելու օրինագծի մասին՝ զինվորական միլիցիա կազմելու համար: Ընդունվում է օրինագիծը:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Ֆինանսական հանձնաժողովի կողմից զեկուցում է վերադարձող գաղթականներին օգնելու նպատակով 4 միլիոն 200.000 ռ. վարկ բաց անելու օրինագծի մասին:

Դաշնակց[ական] ֆրակցիայի առաջարկությամբ որոշվում է օրինագիծը վերադարձնել խնամատ[արության] մինիստրին՝ ավելի մշակված ձևով խորհրդարան բերելու պայմանով:

Այնուհետև քննվում է Երևան քաղաքի դպրոցների ծախքերի 50 տոկոս և միլիցիայի ծախքերի 70 տոկոս նպաստ տալու խնդիրը: Երկար վիճաբանություն է ծագում նպաստ տալու խնդրի վերաբերմամբ, սակայն ի վերջո որոշվում է ձայների մեծամասնությամբ տալ հիշյալ նպաստը:

Նիստը փակվեց գիշ[երվա] ժ. 12-ին: